# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

*Լերմոնտովո համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 20-ի նիստի.*

գ. Լերմոնտովո *Համայնքի ղեկավարի աշխատասենյակ*

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

**Մասնակցում էին՝**

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Իվան Բոլոտին, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

**ՆԻՍՏԸ** - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

**Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:**

**Կողմ՝** 5, **դեմ՝ 0 ընդունվեց որոշում**:

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.**

**Հաստատված օրակարգը /N01/՝**

1.ԼՄ Լերմոնտովո համայնքի ավագանու 26.12.2024 թ-ի "Լերմոնտովո համայնքի 2025 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Մ.Բոլոտինա

2.ԼՄ Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին

զեկ. Մ.Բոլոտինա

3.ԼՄ Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի Կանոնադրությունը հաստատելու մասին

զեկ. Ա.Հարությունյան

**ԸՆԹԱՑՔԸ՝**

1. **<u>ԼՍԵՑԻՆ</u>** - ԼՄ Լերմոնտովո համայնքի ավագանու 26.12.2024 թ-ի "Լերմոնտովո համայնքի 2025 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի 2025 թ-ի հաստատված բյուջեում կատարվող փոփոխությունների նախագիծը, ներկայացրեվ փոփոխման ենթակա կետերը:

Քննարկելուց հետո ավագանու անդամները ընդունեցին որոշում 2025 թ-ի բյուջի փոփոխությունները հաստատելու մասին:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N02/**

2. **LUԵՑԻՆ** - ԼՄ Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեի կատարման մասին հաշվետվությունը, որը համայնքի ավագանու անդամները ընդունեցին ի գիտություն:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N03/**

3. **LUԵՑԻՆ** - Լերմոնտովոյի համայնքապետարանի աշխատակազմի Կանոնադրությունը հաստատելու մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Հարությունյանը: Նա ներկայացրեց 2023 թ-ի հաստատված Կանոնադրության մեջ փոփոխությունների անհրաժեշտությունը՝ հիմնականում հավելվածի տեքստից հանվել են "ստորաբաժանումներ" բառերը, քանի որ համայնքապետարանը չունի այդպիսիք:

**Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N04/**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

5.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ